

մտածեց նա, բայց ոչինչ դուրս չեկաւ: Օգոստինոսը յոգ-
նեց երկար մտածելուց: Գլուխը ցաւեց՝ քնաց ծովի ափը
թարմանալու: Գնում է աւազի վրայով, մտածում է իւր
խնդրի մասին և տեսնում է մի երեխայ, որ կոտրած
փարչով ծովից ջուր է բերում և լցնում փոքրիկ փոսի մէջ:

— Ի՞նչ ես անում այստեղ, սիրելի երեխայ, հարցրեց
Օգոստինոսը:

— Փոս եմ փորել և ուզում եմ ծովի բոլոր ջուրը
լցնել այստեղ, պատասխանեց երեխան շարունակելով
գործը:

Օգոստինոսը ժպտաց և առաջ գնալով ասաց ինքն
իրան:

— Որքան պարզամիտ են լինում երեխաները. ճրբան
քիչ բան են հասկանում. օրինակ այս երեխան ուզում է
կոտրած փարչի կտորով ծովի բոլոր ջուրը լցնել փոքրիկ
փոսի մէջ:

Օգոստինոսի միտքը կրկին վերադարձաւ իւր նախկին
խնդրին և ուշքը գլխին հաւաքելով ասաց:

— Մի՞թէ ես էլ նոյն երեխան չեմ. իմ թոյլ խելքով
ուզում եմ ըմբռնել և ուրիշի առաջ բաց անել Աստուծոյ
յաւիտենական գոյութեան էութիւնը: Ի՞նչպէս կարող է
փոքրը պարփակել Մեծին և այդ փոքրի համար բաւական
է և այն, որ խոնարհի մեծի առաջ, ինքն իրան յանձնի
Նրա կամքին, աշխատի ճանաչել և կեանքի մէջ կատարել
այդ կամքը:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ

1846 թուականին գտնուեցաւ Նեպտուն մոլորակը:
Այս մոլորակի գիւտը կատարուեցաւ անսովոր կերպով՝
գիտնականի առանձնասենեակում, դրասեղանի մօտ:
Դրանից 25 տարի առաջ գիտում էին մի ուրիշ մոլորակ՝
Ուրան: Նրա շարժման ճանապարհը հաշուի առնելով՝ հե-

տեւում էին նրան։ Առաջ եկան անսպասելի խոտորումներ։ Գիտնականները վարանման մէջ էին։ Այն ժամանակ մի ոմն, ֆրանսիացի Լաւերյէն, ենթադրեց, որ Ուրանի յետեւում պէտք է լինի մի ուրիշ մոլորակ, որ իւր առաջըգութեամբ ազդում է Ուրանի վրայ, ուստի և վերջինս խոտորում է գիտնականների ենթադրած ուղիղ ճանապարհից։

Լաւերյէն 1845 թ. սկսեց հաշիւ անել և շուտով որոշեց նոր, մինչև այն ժամանակ անծանօթ մոլորակի մեծութիւնն ու տեղը։ Բերլինում, որտեղ կայ համ լաւագոյն երկնային քարտէզ, համ էլ լաւագոյն հեռագիտակ, սկսեցին երկնակամարի որոշ տեղում որոնել ենթադրուած մոլորակը և ճիշտ որ գտան։ Հետեապէս՝ զարմանալի է թէ ֆրայիտի ճշտութիւն կայ երկնային մարմինների շարժման մէջ և ինչպէս անսխալ շարժում է ամեն ինչ՝ ենթարկուելով յայտնի օրէնքների։ Եւ այդ օրէնքներին ենթարկուած է ամբողջ աշխարհի կեանքը, ինչպէս ամենամեծ մարմինների, այնպէս էլ ամենամիոքների կեանքը, արեւի և ովկիանոսի, հիւլէի և ջրի կաթիլի կեանքը։ Երկրի ահագին մեքենայի մէջ ամեն մի շնչին պարագայ ենթարկուած է Բարձրագոյն Բանականութեանը։ Աւետարանում ասուած է, որ առանց Աստուծոյ կամքին մարդու գլխից մի մազ անգամ վայր չի ընկնիլ։— Եթէ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն երկրի վրայ, Մարդկանց մէջ այնչափ անկարգութիւն է տիրում, ինչո՞ւ երբեմն մեր կեանքը լինում է շատ ծանր։ Պատասխան տալիս է հին իմաստասէր Էպիկտէտը։ Նա ասում է. «Աստուած ստեղծել է մարդուն ուրախութեան և երջանկութեան համար և ոչ ցաւի ու վշտի. իսկ եթէ մարդիկ անբաղդ են, դրանում յանցաւորը ինքներն են. նշանակում է նրանք իրանց կեանքը չեն համաձայնեցնում Արարչի իմաստուն կամաց հետ։ Կեանքի մէջ նոյնն է, ինչ որ երգեցիկ խմբի մէջ։ Երգեցողութիւնը այն ժամանակ ներգաշնակ կլինի, երբ երգիչները ահանջ դնեն խմբապետին և հետեւեն նրա նշաններին։

Նաւի համար նշանակուած է ճանապարհ և նրան բաց են թողել այդ ուղղութեամբ, եթէ զեկը ուղիղ բռնուի, նաւը յաջողութեամբ կհասնի նաւահանգիստ, իսկ եթէ ճանապարհից խտտորի, կարող է հանդիպել ծանծաղուտի, կաշել ստորջրեայ քարերի կամ ծովափնեայ ժայռերին: Նոյնն է և մարդկային կեանքի մէջ:

Մարդս ազատ է վարուել այնպէս, ինչպէս ուղղում է նա կարող է լողալ այս ու այն կողմ, շուռ դալ զանա- նազան կողմեր: Նա ինքն է ընտրում և ուղղում կեանքի ճանապարհը, բայց նրա ճանապարհի յաջողութիւնը այն ժամանակ կլինի յուսալի, երբ այդ լինի Աստուծոյ կամաց ճանապարհը: Եթէ երկաթուղին շինուի արհեստի կանոն- ների համեմատ, շոգեմեքենան և վագոնները լինին ան- թերի, մեքենավարը՝ յուսալի մարդ, այն ժամանակ գնացքը երբէք ճանապարհից չի խտտորիլ և խորտակումն տեղի չի ունենալ: Իսկ եթէ ամեն ինչ շինուի կիսատ- պուտ, արհամարհուին շինարարական արուեստի հիմ- նական կանոնները, այն ժամանակ գնացքի խորտակումն անխուսափելի է: Ամեն ինչ ունի իւր կանոնը, իւր օրէնք- ները, և նրանց արհամարհել անպատիժ կերպով չի կա- րելի: Նոյնն է և մարդու կեանքի մէջ, ինչպէս չի կարելի առանց ստամոքսը կեղտոտելու և առողջութիւնը խան- գարելու առողջ սնունդի փոխարէն կուլ տալ կաւ, քար, աւազ, նոյնպէս առանց կեանքի խանգարելու, հոգիդ կեղտոտելու չի կարելի ապրել՝ լսելով քմահաճոյքներիդ, կերակրուելով չարութեամբ և անարդարութեամբ:

Աշխարհի կեանքը առաջ է գնում Արարչի օրէնքնե- րով: Մարդուս կեանքը պէտք է յարմարուի Աստուծոյ կամքին: Դրա համար էլ մարդուս բարձրագոյն իմաստու- թիւնը նրանում չէ, որ հասկանայ երկնքի և երկրի բոլոր գաղտնիքը, այլ ամենից առաջ նրանումն է, որ հասկանայ մեր կեանքի նպատակը. իմանայ թէ ինչ է Աստուծոյ կամքը, ուստի և Փրկիչը ասում է մարդկանց, «խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա» (Մատ. 2. 33):

Իսկ եթէ խաւար տեղում ինչպէս կարելի է գործ անել, այդ բոլորին յայտնի է։ Մէկ վերցնում ես այն, ինչ հարկաւոր չէ, կամ դնում ես այնտեղ, ուր պէտք չէր դնել, կամ մի բան ես կոտրում, կամ գայթում-ընկնում ես։ Այդպիսով բացի փաստից ոչինչ չի դուրս գալիս, իսկ պատճառը մէկ է՝ մութը։

Այդպէս ուրեմն հասկանալի է, թէ ինչու մեր կեանքը այսպէս անբարեկարգ է և թերութիւններով լի։ Մենք ապրում ենք մթութեան մէջ, պարզ չենք տեսնում Աստուծոյ կամքը, յաճախ չենք հասկանում թէ որն է բարին, որը չար, չգիտենք տարբերել թէ ինչ է Աստուծոյ կամքը, ինչ անձնական քմահաճութիւնը, ինչ մարդկանց կամայականութիւնը, Փրկիչը ասում է. «մոլորւում էք որովհետեւ չգիտէք ոչ գիրը և ոչ Աստուծոյ զօրութիւնը»։ Մարդկանց և գլխիւր և սիրտը այնպիսի մտքերով և հոգսերով չէին զբաղուած, որ գտնէին կեանքի ուղիղ ճանապարհը։ Բոլորովին ուրիշ բանի վրայ էին նայում մարդիկ, ուստի և դուրս եկաւ ուղիղ ճանապարհից. մտաւ այնպիսի թանձր անտառ, որ տեղ-տեղ Աստուծոյ լոյսն իսկ անտեսանելի է մնում։ Չորս կողմը կուտական անտառ է, անտառ անարդարութեան, անօրէնութեան, անտոակութեան և ամենատեսակ չարութեան։

Պէտք է դուրս գալ այդ անտառից, խորը չգնալ այլ ևս, այլ փնտրել ելք, լոյս, աշխատել գտնել իսկական ճանապարհը։

Ներկայումս մեզանից շատերի համար կեանքը մի ծանր սայլ է, որ մենք քարչ ենք տալիս օրօրոցից սկսած մինչև գերեզման, լծուելով տանում ենք նրան քրտնաթոր, շնչասպառ եղած, ընկնելով ցեխում խրուելով։ Այդ բոլորը նրանից է, որ գնում ենք ոչ այն ճանապարհով, որով պէտք է ընթանայինք։ Պէտք է փոխել ճանապարհը, գտնել նոր, հարթ, պինդ յուսալի ճանապարհ։ Պէտք է ի նորոյ բարեկարգել կեանքը, ճանապարհին մեծ նշանակութիւն ունի և սայլի լծուածքը, եթէ վզնոցը տեղը չէ, վէրք կպատճառէ ձիուն։ Դրա համար էլ Փրկիչը ասում

Բայց ուր որոնել այդ արդարութիւնը. ո՞վ կարող է ասել մարդուն թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը: Ուսումը, գիտութիւնը բացատրում են թէ աշխարհս և մարդիկ ի՞նչպէս են ապրում՝ ֆիզիքապէս, բայց ի՞նչպէս պէտք է ապրեն հոգեպէս, ի՞նչ պէտք է անեն, որ ընդհանուրի և իրանց բաղդաւորութիւնը կազմակերպեն՝ այդ ասելը գիտութեան ոյժից բարձր է: Այդ բացատրում է մեզ կրօնը, որ սովորեցնում է թէ Աստուած յայտնել է մարդկանց իւր և իւր կամքի մասին:

Դանիայի Կորենհագէն գլխաւոր քաղաքում, մայր եկեղեցու մէջ կայ մի երեւելի արձան: Ծնկաչոք հրեշտակը ձեռքին բռնած ունի մեծ խեցի. աչքերը յառած է դէպի երկինք: Խեցին դատարկ է: Հրեշտակը սպասում է որ Աստուած լեցնի նրան:

Այդ խեցին մարդկային հոգու այլաբանութիւնն է: Մարդկային հոգին ստանում է Աստուծոյ բարերար անձրև, ճշմարտութեան անձրև, Բարձրագոյն իմաստութիւն: Աստուած իւր իմաստութիւնը, իւր յայտնութիւնը ուղարկել է և ուղարկում է առատօրէն, բայց ամենքը չեն կարող ընդունել: Չոր, անջրդի երկրի վրայով անցնում է հեղեղը: Կենսատու անձրևը վտակներով է հոսում, բայց ամենքը չեն կարողանում պէտք եղածին չափ վեր առնել, ոմանք հաւաքում են տակառներով, ուրիշները փարչերով, էլ միւսները փոքր ամաններով: Ջրի պաշարը ամենքի մօտ հաւասար չի լինում: Բոլորը միատեսակ և անարատ կերպով չեն ընդունում Աստուծոյ իմաստութիւնը: Երկընքումը արևը լուսաւորում է պայծառ, իւր ճառագայթները առատօրէն ուղարկում է ամենուրեք, բայց մարդկանց բնակարաններում լոյսը տարբեր է՝ նայելով թէ ի՞նչպիսի պատուհաններից անցնում է արեգակի լոյսը: Լուսամուտներից մի քանիսը ապակիով են ծածկուած, միւսները՝ իւղոտ թղթով, երրորդները՝ հորթի բշտիկով: Էլ միւսինը լուսամուտները ծածկուած են թանձր փոշով: Փողոցում պայծառ լոյս է, իսկ սրա տանը կատարեալ խաւար է տիրում:

է. «Առէք զլուծ իմ ի ձեզ և ուսարուք յինէն . . . զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրօգի»:

Երբ մենք մօլորուում ենք անտառում և ինքներս չենք կարողանում ճանապարհ դուրս գալ, սկսում ենք դռալ, ձայն տալ, արդեօք արձագանք չի՞ տալ մէկը: Նոյնն է և կեանքի մէջ: Մենք բոլորս դուրս ենք եկած ուղիղ ճանապարհից, յաճախ չգիտենք թէ ո՞ւր ենք գնում: Պէտք է օգնութիւն: Փրկիչն էլ տալիս է այն: Նա հրաւիրում է իւր մօտ մօլորուածներին և յոգնածներին ասելով՝ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»:

Գնանք նրա յետեից և նրանից սովորենք թէ ինչ է կեանքը:

Թարգմ. Գրիգոր Բաե. Նոր-Արեւեանց.



ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

Բ.

Երկուշաբթի առաւօտեան «Օրուայ նորութիւններ» թերթի խմբագիր-հրատարակիչ Նորման Կատաժ Էր խմբագրատան գրասենեակում: Նրա առաջ գիշուած էին յօդուածների սրբագրութիւններ: Ինքն ևս պատրաստուում էր առաջնորդող յօդուած գրելու: Թերթը դուրս էր գալիս երեկոները, ուստի մինչև ճաշ յօդուածը պէտք է պատրաստ լինէր: Նորման առհասարակ գրում էր արագ, առանց դժուարութեան և սովորաբար մի յօդուած գրելը տևում էր 2—3 ժամ: Այժմ նստել էր և չգիտէր ինչ գրէր և ինչպէս երեկուայ խոստումը միանգամայն փոխել էր նրա բոլոր հայեացքները թերթի նշանակութեան մասին: